ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ն ստորև ներկայացնում է իր կարիքների համար սննդամթերքի ձեռքբերման նպատակով կազմակերպված ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2021 թվականի հունվարի 13-ին կնքված N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-3 պայմանագրում 2021 թվականի հունվարի 25-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ - N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-3 պայմանագրի գնումը կատարվել էր <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդածի 6-րդ կետի համաձայն: ՀՀ առողջապահության նախարարի 24.12.2020 թվականի N 4581-Ա հրամանով հաստատվել է ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի եկամուտների և ծախսերի նախահաշիվը:

Փոփոխության նկարագրություն-Համաձայնագրով հաստատվել է N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-3 պայմանագրի վճարման ժամանակացույցը /հավելված 2/:

Փոփոխության հիմնավորում-Համաձայն ՀՀ Կառավարության 526-Ն որոշման 18-րդ կետը և N ՍՀԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/4-3 պայմանագրի 8.15 կետը:

Պատվիրատու՝ ***ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ***